ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակը ըստ արժանվույն նշեցին աշխարհի առաջադեմ մարդկությունը, Սովետական Միության ժողովուրդները, այդ թվում և հայ ժողովուրդը։

Ապրիլի 16-ին Ալ. Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի թատրոնում տեղի ունեցավ Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի և Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի համատեղ հանդիսավոր նիստը՝ նվիրված մեծ տարելիցին։ Այդտեղ էին հանրապետության աշխատավորության ներկայացուցիչները՝ բանվորներ, կոլտնտեսականներ, ծառայողներ, գիտության ու արվեստի դործիչներ, կուսակցական, սովետական, արհմիութենական, կոմերիտական աշխատողներ, սովետական բանակի մարտիկներ։

Հանդիսավոր նիստը բացեց ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Խ. Հարությունյանը։

«Մեզ հովանի է մեծ Լենինի անպարտելի դրոշը» զեկուցումով նիստում հանդես եկավ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Ե. Քոչինյանը։

— Լենինի կյանքը սխրանք էր,— ասաց զեկուցողը։ — Նրա մեջ մարմնավորվել էին պրոլետարական հեղափոխականի ամենաակնառու գծերը՝ հզոր միտք, ամենահաղթ կամք, սրբական ատելություն դեպի ստրկությունն ու ճնշումը, հեղափոխական կրքոտություն, հետևողական ինտերնացիոնալիզմ, անսահման հավատ մասսաների ստեղծագործական ուժերի նկատմամբ, կազմակերպչական վիթխարի հանճար։

Ա. Ե. Քոչինյանը հանգամանորեն անդրադարձավ Լենինյան ուսմունքի վիթխարի հեղափոխիչ դերին և՛ պատմական այն դարաշրջանում, երբ մասսաները նրա ստեղծած կուսակցության ղեկավարությամբ ոտքի էին ելել հին աշխարհը տապալելու համար, և՛ այն տարիներին, երբ ազատագրված մարդը կառուցում էր սոցիալիզմ, և՛ ներկա ժամանակաշրջանում, երբ այդ ուսմունքը հզոր փարոսի պես լուսավորում է ժողովուրդների ազատագրման ճանապարհը։

Ողջ աշխարհի առջև հառնեց հզոր, բարձր զարգացած սոցիալիստական պետությունը՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը, ծնվեց սկզբունքորեն մի նոր աշխարհ, մարդու կողմից մարդու շահագործումից, սոցիալական հակամարտություններից, սոցիալական անհավասարությունից զերծ աշխարհ։ Սովետական ժողովուրդը կուսակցության ղեկավարությամբ հաջողությամբ կենսագործեց սոցիալիստական հասարակարգի նյութատեխնիկական բազայի ստեղծման լենինյան պատգամները։

Սովետական իշխանության տարիներին իրագործվեց պատմության մեջ հիրավի չտեսնված շրջադարձ ժողովրդի հոգևոր կյանքում։ Աշխարհում առաջին անգամ կուլտուրայի, գիտության, տեխնիկայի և արվեստի նվաճումներն ի սպաս դրվեցին աշխատավորներին, դարձան նրանց սեփականությունը։

Ընկ. Քոչինյանը խոսում է գիտության զարգացման, կուլտուրական հեղափոխության իրականացման, ժողովրդի կրթական մակարդակի բարձրացման բնագավառում ձեռք բերված նվաճումների մասին։

Լենինիզմի մեծագույն հաղթանակներից մեկը ազգային հարցի լուծումն է մեր երկրում։ Բազմաթիվ ազգեր ու ազգություններ գտան իրենց առաջընթացի ուղին ՍՍՀՄ եղբայրական ընտանիքում։ Զեկուցողը վեր հանեց հայ ժողովրդի պատմական ճակատագրում Լենինի ուսմունքի ունեցած մեծ նշանակությունը։

Հայ ժողովրդի լավագույն զավակները ցարիզմի դեմ մղված երկարատև դաժան պայքարում իրենց գործուն մասնակցությունն են բերել՝ ի նպաստ սոցիալիստական հեղափոխության նախապատրաստման և իրականացման։ Լենինի գործի հավատարիմ զինակիցներն են եղել Ի. Լալայանցը, Բ. Կնունյանցը, Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Ալ. Մյասնիկյանը և շատ-շատերը։ Մեծ առաջնորդը իր գործունեության տարբեր շրջաններում ուշի-ուշով հետևել է Հայաստանի իրավիճակին, բազմիցս մերկացրել իմպերիալիզմի դավերը, նշել մեր ժողովրդի ազատագրման ուղիները։ Միայն Հոկտեմբերյան հեղափոխությունն ու լենինյան գաղափարները հայ ժողովրդին վերջնականապես փրկեցին ֆիզիկական բնաջնջումից։

Ընկ. Քոչինյանը այնուհետև խոսում է սովետական իշխանության տարիներին մեր ժողովրդի կյանքում կատարված մեծ փոփոխությունների մասին տնտեսության, գիտության ու կուլտուրայի

բնագավառներում։ Կրկնակի Լենինի շքանշանակիր Սովետական Հայաստանը զարգացման մակարդակով այսօր համեմատվում է բարձր զարգացած շատ երկրների հետ։

Հանդիսավոր նիստի մասնակիցները ընդունեցին ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեին ուղղված նամակ, որը հրապարակեց ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Ռ. Հ. Խաչատրյանը։

* * *

Մարտի 24-ին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի մեծ դահլիճում տեղի ունեցավ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը՝ նվիրված Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակին։

Ընդհանուր ժողովը բացեց ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանը։ Ապա ճառով հանդես եկավ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Ե. Քոչինյանը։ Նա նշեց, որ սովետական իշխանության հաղթանակից հետո Լենինը կուսակցության ջանքերն ուղղում էր այն բանին, որպեսզի գիտության ու կուլտուրայի նվաճումները ի սպաս դրվեն մարդկանց շահերին, դառնան համաժողովրդական սեփականություն։ Լենինի անվան հետ է կապված գիտության պետական կազմակերպումը։ Եվ այսօր մեր երկրում իրականություն դարձած գիտության աննախադեպ վերելքը լենինյան դաղափարների ծնունդն է։

Քիչ չէ նաև մեր հանրապետության գիտնականների բաժինը սովետական գիտության զարգացման ասպարեզում։ Հայրենական մեծ պատերազմի ծանր տարիներին կազմակերպված հայկական ակադեմիան այնուհետև զարգացավ համամիութենական և համաշխարհային գիտությանը զուգընթաց։ Հայաստանի գիտական միտքը ներկայումս որոշակի տեղ է գրավում սովետական գիտության ընդհանուր սիստեմում։ Ընկ. Քոչինյանը բարձր գնահատեց հայ աստղագետների, ֆիզիկոսների, մաթեմատիկոսների, քիմիկոսների, երկրաբանների, պատմաբանների, լեզվաբանների և գիտության այլ ճյուղերի մասնագետների ավանդը գիտական մտքի գանձարանում։

Ժողովում «Վ. Ի. Լենինը և բնագիտությունը» զեկուցումով հանդես եկավ ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։ Նա ասաց.

— Լինելով սուր և խորաթափանց մտքի տեր և ունենալով լայն ու բազմակողմանի էրուդիցիա, Լենինը ոչ միայն ծանոթ էր իր ժամանակվա գիտության բոլոր կարևոր նվաճումներին, ոչ միայն ընդունակ էր օգտագործել այդ նվաճումները իր առօրյա աշխատանքում, այլև ինքը հարստացրեց գիտությունը՝ իր կողմից ստեղծված նոր գիտական գանձերով, վերլուծելով պատմական նոր փուլի երևույթները և լուսավորելով մարդկային հասարակության հետագա զարգացման ուղիները։ Լենինի մեջ գիտնականը զարմանալի ներդաշնակությամբ ձուլված էր պրակտիկ գործչի հետ։ Ռևակցիայի տարիներին գրած «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» գրքում նա փիլիսոփայական ճիշտ մեկնաբանություն տվեց բնագիտության մի շարք նվաճումների, դրանով իսկ պաշտպանելով դիալեկտիկական մատերիալիզմի սկզբունքները գիտության խորթ տեսություններից՝ մախիզմից և էմպիրիոկրիտիցիզմից, որոնք իդեալիստական փիլիսոփայության տարատեսակներն էին։

Զեկուցողը մանրամասնորեն վերլուծեց աշխարհի ճանաչման լենինյան ելակետները, ցույց տալով, որ դրանք փիլիսոփայորեն ամենաճիշտ ընկալումներ էին, որոնք և հետագայում ապացուցվեցին գիտության մեջ կատարված մեծ հայտնագործություններով։

Լենինյան հոբելյանի նախօրյակին հոբելյանական գիտական նստաշրջաններ գումարվեցին ակադեմիայի պատմության, փիլիսոփայության և իրավունքի, տնտեսագիտության, լեզվի, գրականության, արվեստի ինստիտուտներում և արևելագիտության սեկտորում։

* * *

Երևանի պետական համալսարանի բազմահազարանոց կոլեկտիվը հանդիսավորությամբ նշեց Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակը։ Համաժողովրդական տոնի նախօրյակին համալսարանի բոլոր ֆակուլտետներում տեղի ունեցան հոբելյանական գիտական նստաշրջաններ։

Գիտական նստաշրջանի պլենար նիստը տեղի ունեցավ մարտի 18-ին, համալսարանի մեծ դահլիճում։ Ներածական խոսքով այն բացեց համալսարանի ռեկտոր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Դ. Ներսիսյանը։

Համալսարանի պրոռեկտոր, պրոֆ. Մ. Մելիքյանը հանդես եկավ «Ժողովուրդների դաշինքի լենինյան ուսմունքը» զեկուցմամբ։ «Ոմացարանության առարկայի լենինյան ըմբռնումը» թեմային էր նվիրված փիլիսոփայության ամբիոնի վարիչ, պրոֆ. Հ. Դարբիելյանի զեկուցումը։ Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան, պրոֆ. Ռ. Սահակյանը զեկուցում կարդաց «Վ. Ի. Լենինը և արդի ֆիզիկայի տեսական մի քանի հարցեր» թեմայով։ Քաղաքատնտեսության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ղ. Բաշինջաղյանը զեկուցեց «Լենինյան տեսությունը պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի մասին» թեմայով, իսկ պրոֆ. Է. Ջրբաշյանը զեկուցում կարդաց «Վ. Ի. Լենինը և գեղագիտության հարցերը» նյութի շուրջը։

Ղ. ԱՐՏԱՇՅԱՆ